ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 44

«26» 04 2018 թ. գ. Երևան

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N 54 ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 87 ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դատախազների ատեստավորման գործընթացը հստակեցնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 50-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել դատախազների ատեստավորում անցկացնելու կարգը՝ համաձայն հավելված N 1-ի (կցվում է):

2. Հաստատել դատախազների ատեստավորում անցկացնելու հարցաշարը՝ համաձայն հավելված N 2-ի (կցվում է):

3. Հաստատել դատախազների գնահատագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված N 3-ի (կցվում է):

4. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ գլխավոր դատախազի 2007 թվականի օգոստոսի 1-ի «Դատախազի ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 54 և 2017 թվականի սեպտեմբերի 25-ի «Դատախազի ատեստավորում անցկացնելու հարցաշարը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008 թվականի հոկտեմբերի 20-ի N 78 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 87 հրամանները:

5. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

6. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության

զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018 թվականի ապրիլի 26-ի
թիվ «44» հրամանի

ԿԱՐԳ

ԴԱՏԱԽԱԶԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է դատախազի ատեստավորում անցկացնելու **(այսուհետ՝ ատեստավորում անցկացնելու)** կարգը:

2. Ատեստավորումն անցկացվում է զբաղեցրած պաշտոնին դատախազի մասնագիտական գիտելիքների, գործնական հմտությունների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը որոշելու, ինչպես նաև ծառայողական առաջխաղացման նպատակով:

3. Ատեստավորումն անցկացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը **(այսուհետ՝ Հանձնաժողով)** «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին **(այսուհետ՝ Օրենք)**, սույն կարգին և այլ իրավական ակտերին համապատասխան:

II. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարը մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի **(այսուհետ՝ գլխավոր դատախազ)** հաստատմանն է ներկայացնում հաջորդ տարում հերթական ատեստավորման ենթակա դատախազների ցուցակը, որը համապատասխան ժամանակացույցով հաստատվում է գլխավոր դատախազի կողմից և ուղարկվում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներին ու դատախազություններին **(այսուհետ՝ կառուցվածքային ստորաբաժանումներ, դատախազություններ)**:

5. Ատեստավորման ենթակա դատախազներն ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, տեղեկացվում են ատեստավորում անցկացնելու ժամանակի մասին՝ նրանցից ստորագրություն վերցնելով:

6. Ատեստավորման օրվանից առնվազն երկու շաբաթ առաջ՝ ատեստավորվող դատախազի անմիջական վերադասը Հանձնաժողովի նախագահին է ներկայացնում դատախազի գնահատագիրը՝ համաձայն ձևի (կցվում է):

7. Գնահատագիրը պետք է բովանդակի տվյալներ դատախազի մասին՝ ծննդյան թիվը, կրթությունը, Հայաստանի Հանրապետության դատախազության մարմիններում և զբաղեցրած պաշտոնում աշխատանքային ստաժը, նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում ստացած խրախուսանքներն ու կարգապահական տույժերը, գործնական, անձնական հատկանիշների և ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը: Այդ գնահատականը պետք է հիմնվի նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակաշրջանում դատախազի կողմից իր կատարած աշխատանքների մասին տարին մեկ անգամ անմիջական վերադաս դատախազին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ վերջինիս եզրակացությունների հիման վրա:

8. Դատախազի աշխատանքի գնահատականը, նրա գործնական ու անձնական հատկությունների բնութագրումը պետք է լինեն հստակ, հիմնավոր և օբյեկտիվ: Գնահատագրում նշվում են ինչպես դատախազի անձնական և մասնագիտական դրական հատկանիշները, այնպես էլ աշխատանքում և վարքագծում թույլ տված խախտումները, թերություններն ու բացթողումները: Անմիջական վերադաս դատախազի կողմից գնահատագրի չափանիշների անտեսումը կամ սահմանված կարգի խախտմամբ գնահատագիր ներկայացնելը համարվում է ծառայողական պարտականությունների ոչ պատշաճ կատարում:

9. Դատախազն ատեստավորում անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր գնահատագրին:

10. Գնահատագրի վերաբերյալ գրավոր անհամաձայնության դեպքում դատախազն այդ մասին անմիջական վերադաս դատախազին, վերադաս դատախազին կամ որակավորման Հանձնաժողովին ներկայացնում է զեկուցագիր՝ ատեստավորում անցկացնելու օրվանից առնվազն երեք օր առաջ, ինչը կցվում է գնահատագրին:

III. ԱՐՏԱՀԵՐԹ ԱՏԵՍՏԱՎՈՐՄՈՒՄԸ

11. Օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ արտահերթ ատեստավորում կարող է անցկացվել հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո՝ գլխավոր դատախազի հրամանով կամ դատախազի ցանկությամբ:

12. Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժինն արտահերթ ատեստավորում անցկացնելու հրամանի մասին անմիջապես, իսկ ատեստավորման անցկացման ժամանակի մասին՝ լրացուցիչ տեղեկացնում է դատախազին:

13. Արտահերթ ատեստավորում անցկացնելու հրամանը ստորագրվելուց կամ ատեստավորում անցնելու մասին դատախազի դիմումը գլխավոր դատախազի կողմից հանձնաժողովին մակագրվելուց հետո 5-օրյա ժամկետում դատախազի անմիջական վերադասը կազմում, դատախազին ծանոթացնում և Հանձնաժողովի նախագահին է ներկայացնում դատախազի գնահատագիրը:

14. Արտահերթ ատեստավորումն անցկացվում է հրամանը ստորագրելուց կամ ատեստավորում անցնելու մասին դատախազի դիմումը գլխավոր դատախազի կողմից մակագրվելուց հետո 15 օրվա ընթացքում:

IV. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

15. Նախքան ատեստավորումը, Հանձնաժողովի նախագահը լուծում է Հանձնաժողովի իրավազորության հարցը՝ ստուգելով Հանձնաժողովի անդամների ներկայությունը, ստուգում է պահանջվող փաստաթղթերի, այդ թվում՝ գնահատագրերի առկայությունը, ինչպես նաև ատեստավորվողների ներկայությունը, որից հետո հայտարարվում է ատեստավորման անցկացման սկիզբը:

16. Դատախազն ատեստավորմանը ներկայանում է անձամբ՝ Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակցի իր վկայականով: Ատեստավորմանն անհարգելի պատճառով չներկայանալը համարվում է ծառայողական պարտականությունների ոչ պատշաճ կատարում:

17. Դատախազը Հանձնաժողովին ներկայանում է՝ հայտնելով իր անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը:

18. Դատախազին արգելվում է մտնել ատեստավորման անցկացման սենյակ՝ իր մոտ ունենալով տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութեր, կապի միջոցներ կամ տեխնիկական այլ սարքեր:

19. Ատեստավորումն անցկացվում է հարցազրույցի եղանակով:

V. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

20. Հարցազրույցն սկսվում է ատեստավորվող դատախազի վերաբերյալ փաստաթղթային տվյալների ստուգմամբ:

21. Փաստաթղթային ստուգման ընթացքում ուսումնասիրվում են դատախազի փաստաթղթերը, որից հետո դատախազի անմիջական վերադասը Հանձնաժողովին ներկայացնում է դատախազի գնահատագիրը, ինչպես նաև նրա գրավոր անհամաձայնությունը, եթե այդպիսին կա:

22. Փաստաթղթային ստուգումն ավարտվում է դատախազին՝ հարցազրույցին մասնակցելու թույլտվություն տալու կամ չտալու որոշման կայացմամբ: Հարցազրույցին մասնակցելու թույլտվություն չտալու վերաբերյալ կայացվում է գրավոր պատճառաբանված որոշում, որը նույն օրը տրամադրվում է դատախազին:

23. Դատախազին չի թույլատրվում մասնակցել հարցազրույցին, եթե հայտնաբերվել է փաստաթղթային տվյալների անհամապատասխանություն, եթե առկա է զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու փաստ կամ Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը լիարժեք չեն:

24. Դատախազին վերաբերող փաստաթղթային տվյալների անհամապատասխանության կամ փաստաթղթերի ոչ լրիվության դեպքում, դատախազի

ատեստավորումը հետաձգվում է մինչև դրա հիմքերի վերանալը, բայց ոչ ավելի, քան մեկ ամիս ժամկետով:

25. Հարցազրույցը դատախազի՝ զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված գործառույթներից բխող պարտականությունների իմացության և գործնական հմտությունների ստուգումն է՝ հարցաշարի հիման վրա տրված հարցերի միջոցով:

26. Հարցաշարը բովանդակում է իրավագիտության համապատասխան ոլորտի առանձին ինստիտուտներին, իրավական ակտերի դրույթներին վերաբերող հարցեր:

27. Հանձնաժողովի հարցադրումները պետք է ձևակերպվեն հստակ, ատեստավորվողի համար հասկանալի և բովանդակային առումով նպատակաուղղված լինեն հարցաշարում ներառված հարցերի իմացությունը ստուգելուն:

28. Դատախազին հարցեր տրվում են հարցաշարում ներառված հարցերի շրջանակից:

29. Ատեստավորման հարցաշարը, ինչպես նաև դրանում կատարված փոփոխությունները, ատեստավորումից առնվազն մեկ ամիս առաջ պետք է հասանելի լինեն դատախազին: Հարցաշարը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության դատախազության պաշտոնական կայքէջում:

30. Հարցաշարը փոփոխվում կամ լրացվում է ըստ անհրաժեշտության՝ հաշվի առնելով օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայի զարգացումը:

31. Յուրաքանչյուր դատախազի հարցազրույցն անցկացվում է առանձին:

32. Հարցազրույցի ընթացքում Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ դատախազին կարող է տալ առավելագույնը երկու հարց, սակայն հարցերի ընդհանուր քանակը պետք է լինի առնվազն վեցը: Յուրաքանչյուր հարցից հետո հարց տվող Հանձնաժողովի անդամը հայտարարում է պատասխանի ճիշտ կամ սխալ, մասնակի ճիշտ կամ մասնակի սխալ լինելը, իսկ սխալ կամ մասնակի սխալ պատասխանի դեպքում նշում է ճիշտ պատասխանը:

33. Հարցին պատասխանելու համար դատախազին, ցանկության դեպքում, տրվում է ողջամիտ ժամանակ՝ պատրաստվելու համար:

34. Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցը ձայնագրվում և գրավոր արձանագրվում է: Հարցազրույցի ձայնագրությունը կցվում է արձանագրությանը:

35. Հարցազրույցի ձայնագրությունն ու գրավոր արձանագրությունն ունեն միևնույն իրավական ուժը, սակայն, եթե ձայնագրությունը պատշաճ որակի չէ կամ տեխնիկական այլ խնդիրների պատճառով հնարավոր չէ այն վերարտադրել, ապա հիմք է ընդունվում գրավոր արձանագրությունը:

VI. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

36. Հարցազրույցի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է Օրենքի 50-րդ հոդվածի 14-րդ մասով նախատեսված որոշումներից մեկը:

37. Հանձնաժողովը որոշումները կայացնում է բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված:

38. Հանձնաժողովի կայացրած որոշումը դատախազին հայտնվում է Հանձնաժողովի կողմից՝ իր ատեստավորման ավարտից անմիջապես հետո:

39. Դատախազն իրավունք ունի ծանոթանալու որոշմանը, ինչպես նաև բողոքարկելու այն Օրենքի 50-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված կարգով և ժամկետում:

40. Որակավորման Հանձնաժողովի որոշումը և ատեստավորման արդյունքները Հանձնաժողովի նախագահը ատեստավորման ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, ներկայացնում է գլխավոր դատախազին՝ Օրենքից և սույն կարգից բխող համապատասխան որոշումներ կայացնելու նպատակով:

41. Գլխավոր դատախազը սույն կարգի կամ Օրենքի խախտում հայտնաբերելու դեպքում կարող է անվավեր ճանաչել ատեստավորման արդյունքները՝ սահմանելով նոր ատեստավորում անցկացնելու ժամանակը:

42. Ատեստավորման արդյունքների հիման վրա գլխավոր դատախազը համապատասխան որոշում է ընդունում Օրենքի 50-րդ հոդվածի 17-19-րդ մասերով սահմանված ժամկետներում:

43. Օրենքի 50-րդ հոդվածի 21-րդ մասով սահմանված կարգով և ժամկետում դատախազն իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու բողոքը մերժելու մասին գլխավոր դատախազի որոշումը:

44. Հանձնաժողովի նախագահը, Հանձնաժողովի աշխատանքների ավարտից հետո, Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին է ներկայացնում դատախազի ատեստավորման արդյունքում կայացված որոշումները, կազմված արձանագրությունները և բոլոր մյուս փաստաթղթերը՝ դրանք դատախազի անձնական գործում պահելու և սահմանված կարգով արխիվացնելու համար:

45. Հանձնաժողովի կայացրած որոշումները տեղադրվում են Հայաստանի Հանրապետության դատախազության պաշտոնական կայքէջում:

Հավելված N 2

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018 թվականի ապրիլի 26-ի
թիվ «44» հրամանի

Ծանոթություն

Սույն հարցաշարում ընդգրկված հարցերի լիարժեք պատասխանները պետք է ներառեն դրանց օրենսդրական կարգավորումները, դրանց վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներով և ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով սահմանված կանոններն ու դիրքորոշումները:

ՀԱՐՑԱՇԱՐ

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքները.
2) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները.
3) ՀՀ նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակը.
4) ՀՀ Ազգային ժողովը.
5) ՀՀ Կառավարությունը.
6) ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը.
7) ՀՀ դատական համակարգը.
8) ՀՀ Սահմանադրական դատարանը.
9) ՀՀ դատախազության և քննչական մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակը:

Եվրոպական կոնվենցիա և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունք

10) Եվրոպական դատարանի որոշումների իրավաբանական բնույթը և նշանակությունը ՀՀ իրավական համակարգում.
11) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները կյանքի իրավունքի վերաբերյալ.
12) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները խոշտանգումների արգելման վերաբերյալ.
13) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ.
14) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ. քրեական մեղադրանք հասկացությունը.
15) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ. գործերի քննությունը ողջամիտ ժամկետում.

16) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ. դատաքննության հրապարակայնությունը.

17) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ. անմեղության կանխավարկած.

18) Մեղադրյալի նվազագույն իրավունքները.

19) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները քրեական գործերով գանգատարկման իրավունքի վերաբերյալ:

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

20) Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության սկզբունքները.

21) Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգը.

22) ՀՀ գլխավոր դատախազը.

23) Քրեական հետապնդում հարուցելը.

24) Հսկողությունը մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.

25) Մեղադրանքի պաշտպանությունը դատարանում.

26) Դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկումը.

27) Հսկողությունը պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ.

28) Պետական շահերի պաշտպանությունը.

29) Դատախազական ակտերը.

30) Հայաստանի Հանրապետության դատախազությունում ծառայողական ենթակայությունը և դասային աստիճանները.

31) Դատախազի իրավունքներն ու պարտականությունները.

32) Դատախազի խրախուսումն ու կարգապահական պատասխանատվությունը:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք

33) ՀՀ քրեական օրենսդրության սկզբունքները.

34) Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում և տարածության մեջ.

35) Հանցագործության հասկացությունը և հատկանիշները.

36) Հանցագործության տեսակները. շարունակվող և տևող հանցագործությունները.

37) Հանցակազմի տարրերը.

38) Հանցագործության օբյեկտի ընդհանուր բնութագիրը.

39) Հանցագործության օբյեկտիվ կողմի ընդհանուր բնութագիրը.

40) Հանցագործության սուբյեկտի ընդհանուր բնութագիրը.

41) Անմեղսունակություն և սահմանափակ մեղսունակություն.

42) Հանցագործության սուբյեկտիվ կողմի ընդհանուր բնութագիրը.

43) Առանց մեղքի վնաս պատճառելը.

44) Հանցագործությունների համակցությունը.

45) Հանցագործությունների ռեցիդիվը.

46) Ավարտված և չավարտված հանցագործությունները.

47) Հանցագործությունից կամովին հրաժարումը.

48) Հանցակցության հասկացությունը և հատկանիշները.

49) Հանցակիցների տեսակները.

50) Հանցակիցների պատասխանատվությունը, հանցակցի սահմանազանցումը.

51) Հանցանքը մի խումբ անձանց, կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կողմից կատարելը.

52)Անհրաժեշտ պաշտպանությունը՝ որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք.

53) Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք.

54)Ծայրահեղ անհրաժեշտությունը՝ որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք.

55) Ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք.

56) Հրաման կամ կարգադրություն կատարելը որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք.

57)Պատժի հասկացությունը և նպատակները.

58) Պատժի տեսակները, հիմնական և լրացուցիչ պատիժները.

59) Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները.

60) Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները.

61) Պատիժ նշանակելը հանցանքների և դատավճիռների համակցությամբ.

62)Հանցակիցների պատասխանատվությունը.

63) Քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու հիմքերը.

64) Պատիժը պայմանականորեն չկիրառելը և օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը.

65) Համաներում և ներում.

66) Դատվածությունը.

67)Անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները.

68) Սպանության հասկացությունը, հասարակ սպանության տեսակները.

69) Որակյալ սպանությունների տեսակները.

70) Արտոնյալ սպանությունների տեսակները.

71) Ինքնասպանության հասցնելու և ինքնասպանության հակելու քրեաիրավական բնութագիրը.

72) Դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը.

73) Մարդուն առևանգելը և ազատությունից ապօրինի զրկելը.

74) Բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունները.

75) Աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելը.

76) Հափշտակության հասկացությունը.

77) Ավազակությունը.

78)Գողության և կողոպուտի քրեաիրավական բնութագիրը.

79) Խարդախության և խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու քրեաիրավական բնութագիրը.

80) Յուրացնելու կամ վատնելու քրեաիրավական բնութագիրը.

81) Շորթման քրեաիրավական բնութագիրը.

82) Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու (փողերի լվացումը) քրեաիրավական բնութագիրը.

83) Առևտրային կաշառքի քրեաիրավական բնութագիրը.

84) Ահաբեկչության քրեաիրավական բնութագիրը.

85) Պատանդ վերցնելու քրեաիրավական բնութագիրը.

86) Բանդիտիզմի քրեաիրավական բնութագիրը.

87) Ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու քրեաիրավական բնութագիրը.

88) Խուլիգանության քրեաիրավական բնութագիրը.

89) Դիակը կամ թաղման վայրերն անարգանքի ենթարկելը.

90) Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը.

91) Պետական իշխանությունը յուրացնելու քրեաիրավական բնութագիրը.

92)Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու քրեաիրավական բնութագիրը.

93) Պաշտոնեական լիազորություններն անցնելու քրեաիրավական բնութագիրը.

94) Խոշտանգման քրեաիրավական բնութագիրը.

95) Կաշառք ստանալու և տալու, կաշառքի միջնորդության քրեաիրավական բնութագրերը.

96) Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը.

97) Ինքնիրավչությունը.

98) Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելու քրեաիրավական բնութագիրը.

99) Սուտ մատնությունը.

100) Հանցագործությունը պարտակելը.

101)Հանցագործության մասին չհայտնելը.

102) Սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալը կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը.

103) Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը.

104) Արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա գույքի նկատմամբ ապօրինի գործողությունները.

105) Ապօրինի ձերբակալելու կամ կալանավորելու քրեաիրավական բնութագիրը.

106) Ապացույցները կեղծելու քրեաիրավական բնութագիրը.

107) Զինծառայողների միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում նրանց փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու քրեաիրավական բնութագիրը.

108) Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու և դասալքության քրեաիրավական բնութագիրը.

109) Մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելու քրեաիրավական բնութագիրը.

110)Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործության քրեաիրավական բնութագիրը:

<u>Քրեական դատավարության օրենսգիրք</u>

111) «Վերջնական որոշում» և «գործն ըստ էության լուծող դատական ակտ» հասկացությունները.

112)«Քրեական հետապնդում» և «մեղադրանք» հասկացությունները: Քրեական հետապնդում հարուցելը և այն դադարեցնելը.

113) «Բնակարան» հասկացությունը.

114) Կրկին անգամ դատվելու անթույլատրելիությունը.

115) Բնակարանի և գույքի անձեռնմխելիությունը.

116) Մրցակցությունը քրեական դատավարությունում.

117) Քրեական դատավարության լեզուն.

118) Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը.

119) Մեղադրանքի կողմը ՀՀ քրեական դատավարությունում.
120) Պաշտպանության կողմը ՀՀ քրեական դատավարությունում.
121) Ներկայացուցիչները և իրավահաջորդները ՀՀ քրեական դատավարությունում.
122) Քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք ՀՀ քրեական դատավարությունում.
123) Անձանց բացարկելը և քրեական դատավարությանը մասնակցելուց ազատելը.
124) Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը.
125) Դատավարության մասնակից ճանաչելու պահանջի իրավունքը.
126) Միջնորդությունների և պահանջների՝ քննության առնելու պարտադիր լինելը.
127) Դատավարական գործողությունների և որոշումների բողոքարկման ազատությունը.
128) Ապացույցների հասկացությունը, որպես ապացույց չթույլատրվող նյութերը.
129) Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները՝ որպես ապացույց.
130) Ապացուցման ենթակա հանգամանքները. որոշակի ապացույցների առկայությամբ հաստատվող հանգամանքները.
131) Ապացույցների տեսակները.
132) Ձերբակալման հասկացությունը և տեսակները.
133) Ձերբակալման հիմքերն ու դատավարական կարգը.
134) Խափանման միջոց ընտրելու հիմքերը.
135) Կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառման հիմքերը և դատավարական կարգը.
136) Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման հիմքերը և դատավարական կարգը.
137) Անձնական երաշխավորության և կազմակերպության երաշխավորության կիրառման հիմքերն ու դատավարական կարգը.
138) Հսկողությանը հանձնելը և հրամանատարության հսկողությանը հանձնելը.
139) Խափանման միջոցը փոփոխելու և վերացնելու հիմքերն ու դատավարական կարգը.
140) Դատավարական հարկադրանքի այլ միջոցների (պաշտոնավարության ժամանակավոր դադարեցում, բերման ենթարկել) կիրառման հիմքերը և դատավարական կարգը.
141) Քաղաքացիական հայցը քրեական դատավարությունում.
142) Դատական ծախսերը.
143) Դատավարական ժամկետները.
144) Քրեական գործի հարուցման առիթները և հիմքերը.
145) Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները.
146) Նախնական քննության ընդհանուր պայմանները.
147) Անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը և դատավարական կարգը.
148) Վկայի և տուժողի հարցաքննության դատավարական կարգը.
149) Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության դատավարական կարգը.
150) Զննման, արտաշիրմման և քննման դատավարական կարգը.
151) Առերեսման դատավարական կարգը.
152) Ճանաչման ներկայացնելու դատավարական կարգը.
153) Խուզարկության և առգրավման դատավարական կարգը.

154) Քննչական փորձարարության դատավարական կարգը.
155) Փորձաքննություն նշանակելու և կատարելու դատավարական կարգը.
156) Քրեական գործով վարույթի կասեցման հիմքերը և դատավարական կարգը.
157) Քրեական գործով վարույթի կարճման դատավարական կարգը.
158) Մեղադրական եզրակացության կառուցվածքը.
159) Դատախազի որոշումները մեղադրական եզրակացությամբ ստացված գործով.
160) Դատարանի որոշմամբ կատարվող քննչական գործողությունները.
161) Դատարանի որոշմամբ կիրառվող դատավարական հարկադրանքի միջոցները.
162) Դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման նկատմամբ դատական վերահսկողությունը.
163) Դատարանի որոշմամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները.
164) Օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման նկատմամբ դատական վերահսկողությունը.
165) Քրեական հետապնդման և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) օրինականության նկատմամբ դատական վերահսկողությունը.
166) Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկումը.
167) Քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների բողոքարկումը.
168) Դատական քննության նախապատրաստելը.
169) Դատական քննության ընդհանուր պայմանները.
170) Դատաքննություն.
171) Դատախազի լիազորությունները գործը կամ նյութը դատարանում քննելիս.
172) Մեղադրողի կողմից մեղադրանքը լրացնելը կամ փոփոխելը.
173) Մեղադրանքից հրաժարվելը և դրա հետևանքները.
174) Դատական քննության արագացված կարգի կիրառման հիմքերը և պայմանները.
175) Դատական վիճաբանությունների էությունը և մասնակիցները: Ամբաստանյալի վերջին խոսքը.
176) Դատավճռի տեսակները.
177) Դատավճռի կառուցվածքը և հատկանիշները.
178) Վերաքննիչ բողոք բերելու սուբյեկտները և դատավարական կարգը.
179) Վերաքննիչ բողոքարկման ենթակա դատական ակտերը և բողոքարկման ժամկետները.
180) Վերաքննության սահմանները.
181) Վերաքննիչ դատարանի լիազորությունները.
182) Դատական ակտերի բեկանման և փոփոխման հիմքերը.
183) Վճռաբեկ բողոքարկման սուբյեկտները, ժամկետները և կարգը.
184) Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը.
185) Վճռաբեկ դատարանի լիազորությունները.
186) Անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունները.
187) Անմեղսունակների գործով վարույթի առանձնահատկությունները.
188) Դատական ակտերի վերանայումը նոր և նոր երևան եկած հանգամանքներով.

189) Հանձնումը որպես քրեական գործերով իրավական օգնության հիմնական տեսակ:

Քրեագիտություն

190) Քննչական վարկածները.

191) Դեպքի վայրի զննության մարտավարությունը.

192) Խուզարկության մարտավարությունը.

193) Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության մարտավարությունը.

194) Դիակի դատաբժշկական փորձաքննությամբ լուծվող հանգամանքները և փորձագետին առաջադրվող հարցերը.

195) Անձանց դատաբժշկական փորձաքննությամբ պարզվող հանգամանքները և փորձագետին առաջադրվող հարցերը.

196) Դատաձեռագրաբանական և դատափաստաթղթաբանական փորձաքննություններով պարզվող հանգամանքները և փորձագետին առաջադրվող հարցերը.

197) Հետքաբանական փորձաքննությամբ պարզվող հանգամանքները և փորձագետին առաջադրվող հարցերը.

198) Դատաձգաբանական փորձաքննությամբ լուծվող հարցերը.

199) Դատաավտոտեխնիկական փորձաքննությամբ պարզվող հանգամանքները և փորձագետին առաջադրվող հարցերը.

200) Սպանությունների քննության մեթոդիկան.

201) Գողությունների քննության մեթոդիկան.

202) ՃԵԿ խախտումների վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան:

Քաղաքացիական օրենսգիրք

203) Քաղաքացիական իրավունքի հասկացությունը և խնդիրները.

204) Քաղաքացիական իրավահարաբերությունների ծագման հիմքերը.

205) Իրավաբանական անձի հասկացությունը և հատկանիշները.

206) Իրավաբանական անձանց տեսակները.

207) Հայաստանի Հանրապետության և համայնքների իրավասուբյեկտության առանձնահատկությունները.

208) Պետական և համայնքային կառավարչական հիմնարկների, ոչ առևտրային կազմակերպությունների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները.

209) Պետական և համայնքային սեփականության իրավունքի հասկացությունը, ծագման և դադարման հիմքերը, պետական սեփականության իրավունքի օբյեկտները.

210) Հողի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները.

211) Պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման կարգը: Պետության սեփականություն հանդիսացող հողամասերն օգտագործման, վարձակալության տրամադրելու հիմքերն ու կարգը.

212) Ապօրինի շինարարության և ինքնակամ կառույցի հասկացությունը, կարգավիճակը.

213) Սեփականության իրավունքի պաշտպանության քաղաքացիաիրավական եղանակները.

214) Գործարքի հասկացությունը, գործարքի տեսակները և ձևը, գործարքի վավերության պայմանները.

215) Հայցային վաղեմություն.

216) Պարտավորության հասկացությունը, տեսակները և տարրերը.

217) Պայմանագիրը փոփոխելը և լուծելը.

218) Պարտավորությունների կատարման հասկացությունը, կատարումն ապահովելու միջոցները: Պարտավորությունների դադարումը.

219) Քաղաքացիաիրավական պատասխանատվության տեսակները և հիմքերը.

220) Վնաս պատճառելու համար պատասխանատվության հիմքերը.

221) Անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորության հասկացությունը և տեսակները:

<u>Քաղաքացիական դատավարության օրենսգիրք</u>

222) Քաղաքացիական դատավարության հասկացությունը և խնդիրները.

223) Քաղաքացիական դատավարության փուլերի ընդհանուր բնութագիրը.

224) Կողմերի հասկացությունը, նրանց դատավարական իրավունքները և պարտականությունները.

225) Երրորդ անձանց հասկացությունը: Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող և չներկայացնող երրորդ անձինք.

226) Քաղաքացիական դատավարությանը դատախազի մասնակցության հիմքերը: Դատախազի կարգավիճակը քաղաքացիական դատավարությունում.

227) Քաղաքացիական գործերի ընդդատության հասկացությունը և տեսակները.

228) Ապացույցների հասկացությունը և դասակարգումը: Ապացույցների տեսակները.

229) Ապացուցման բեռը քաղաքացիական դատավարությունում.

230) Հայցային վարույթի հասկացությունը և էությունը.

231) Հայցի հասկացությունը: Հայցի տարրերը և հայցի հարուցման իրավունքը.

232) Հայցի ապահովում.

233) Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերի վարույթ.

234) Դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու վարույթ.

235) Նոր հանգամանքներով վճիռների և որոշումների վերանայման վարույթ.

236) Վերաքննիչ վարույթի ընդհանուր բնութագիրը և վերաքննիչ բողոքարկման իրավունքը: Վերաքննիչ բողոք բերելու կարգը.

237) Վճռաբեկ վարույթը, վճռաբեկ բողոքարկման իրավունքը: Վճռաբեկ բողոք բերելու կարգը.

238) Վճռաբեկ բողոք բերելու հիմքերը.

239) Դատախազի կողմից դատական ակտերի բողոքարկումը վերաքննության և վճռաբեկության կարգով.

240) Օտարերկրյա դատարանների և արբիտրաժների վճիռների ճանաչումը և կատարումը:

<u>ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք</u>

241) Վարչական դատավարության հասկացությունը և խնդիրները.

242) Վարչական դատարան դիմելու իրավունքը.

243) Վարչական դատավարության մասնակիցները.

244) Գործ հարուցելու հիմքը և հայցի տեսակները.

245) Հայց ներկայացնելու ժամկետները և հայցադիմումին ներկայացվող պահանջները.

246) Հայցադիմումը վարույթ ընդունելը, հայցադիմումի ընդունումը մերժելը.

247) Հայցադիմումի պատասխան ներկայացնելու կարգը.

248) Ապացույցները վարչական դատավարությունում: Լրացուցիչ ապացույցների ընդունումը և հետազոտումը.

249) Ապացուցման բեռը վարչական դատավարությունում.

250) Վարչական դատարանի դատական ակտերը, դրանց ուժի մեջ մտնելը և բողոքարկման կարգը.

251) Դատախազի կողմից դատական ակտերի բողոքարկումը.

252) Վարչական դատարանի բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը, դրանց դեմ բողոք բերելու իրավունքը և ժամկետները.

253) Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք

254) Վարչարարության հասկացությունը և սկզբունքները.

255) Վարչական մարմինները ՀՀ-ում.

256) Վարչական վարույթը և այն իրականացնող մարմինները.

257) Վարչական վարույթի մասնակիցները, փուլերը և ժամկետները.

258) Վարչական ակտը և դրա տեսակները.

259) Վարչական ակտի ձևերը և գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջները.

260) Վարչական ակտի որոշակիությունը և հիմնավորվածությունը.

261) Վարչական ակտ ընդունելը և ուժի մեջ մտնելը.

262) Վարչական ակտի ընդունման մասին իրազեկելը.

263) Վարչական ակտի գործողության ժամկետը.

264) Վարչական ակտն առոչինչ համարելու հիմքերը և կարգը.

265) Վարչական ակտը ոչ իրավաչափ համարելու դեպքերը և հետևանքները.

266) Իրավաչափ վարչական ակտի ուժը կորցնելը.

267) Վարչական բողոք բերելու հիմքերը և կարգը.

268) Վարչական ակտի բողոքարկման ժամկետները.

269) Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվություն կրողը և պատասխանատվության հիմքերը.

270) Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը.

271) Անբողոքարկելի վարչական ակտերի կատարումը:

Պետական շահերի պաշտպանություն

272) Քաղաքացիական և վարչական դատավարությունում դատախազի կարգավիճակը և մասնակցության հիմքերը.

273) Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով կամ հայց հարուցելիս դատախազի իրավունքները.

274) Դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու հիմքերը և հայցի տեսակները.

275) Կատարողական վարույթի հարուցման հիմքերը և կարգը.

276) Կատարողական վարույթի հարուցման ժամկետները.

277) Հարկադիր կատարողի որոշումները և դրանց բողոքարկումը:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրք

278) Դատապարտյալի հիմնական իրավունքները.

279) Դատապարտյալի կապն արտաքին աշխարհի հետ.

280) Դատապարտյալին տեսակցություններ տրամադրելու կարգն ու պայմանները.

281) Դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրելու կարգն ու պայմանները

282) Դատապարտյալի պարտականություններն ու նյութական պատասխանատվությունը

283) Դատապարտյալի աշխատանքն ուղղիչ հիմնարկում՝ կարգն ու պայմանները.

284) Տուգանք պատժատեսակի կատարման կարգը, տուգանքը վճարելու անհնարինությունը, տուգանքի վճարումից չարամտորեն խուսափելն ու դրանց հետևանքները.

285) Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու պատժատեսակի՝ որպես հիմնական և լրացուցիչ պատիժ, կատարման կարգն ու առանձնահատկությունները.

286) Լրացուցիչ պատիժների (հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը, գույքի բռնագրավումը) կատարման կարգն ու առանձնահատկությունները.

287) Հանրային աշխատանքներ պատժատեսակի կատարման կարգն ու առանձնահատկությունները.

288) Կարգապահական գումարտակում պահելու կարգն ու առանձնահատկությունները.

289) Կալանք պատժատեսակի կատարման կարգն ու առանձնահատկությունները.

290) Ուղղիչ հիմնարկում դատապարտյալներին անջատ պահելու կանոնները.

291) Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը.

292) Ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ կիրառվող խրախուսանքի միջոցները.

293) Ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ կիրառվող տույժի միջոցները.

294) Ազատազրկման դատապարտված անձի կողմից պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտումները.

295) Պատժի կրման առանձնահատկություններն ըստ ուղղիչ հիմնարկի տեսակի.

296) Ուղղիչ հիմնարկների տեսակները, դրանց առանձնահատկություններն ու ուղղիչ հիմնարկի տեսակը փոփոխելու կարգը.

297) Պատժից ազատելու հիմքերը, կարգը, վերահսկողությունը պատժից ազատելու և պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերում.

298) Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու կարգը, այդ միջոցները փոփոխելու և դադարեցնելու հիմքերը.

299) Դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացը.

300) Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու կարգն ու պայմանները.

301) Ուղղիչ հիմնարկի վարչակազմի պարտականություններն ազատվող դատապարտյալի աշխատանքն ու կենցաղը կարգավորելու հարցում

302) Ցմահ ազատազրկման դատապարտված անձի՝ պատիժը կրելու առանձնահատկությունները.

303) Անչափահաս դատապարտյալի պատիժը կրելու առանձնահատկությունները.

304) Վերահսկողությունը և հսկողությունը պատիժները կատարելու նկատմամբ.

305) Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբան դատախազական հսկողության առանձնահատկությունները.

306) Ուղղիչ հիմնարկի պետի որոշումների կասեցման կարգն ու պայմանները.

307) Պատիժը կրելու վայր մուտքի և ելքի կարգը:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք

308) Ձերբակալված կամ կալանավորված անձանց հիմնական իրավունքները.

309) Պաշտպանի, մերձավոր ազգականների և այլ անձանց հետ տեսակցելը.

310) Ձերբակալված կամ կալանավորված անձանց կապն արտաքին աշխարհի հետ.

311) Ձերբակալված կամ կալանավորված անձանց պարտականությունները.

312) Կանանց և անչափահասների արգելանքի կամ կալանքի տակ պահելու առանձնահատկությունները.

313) Ձերբակալված անձանց՝ ձերբակալվածների պահելու վայրերում և կալանավորված անձանց՝ կալանավորվածների պահելու վայրերում անջատ պահելու սկզբունքը.

314) Կալանավորված անձանց նկատմամբ կիրառվող տույժի և խրախուսանքի միջոցները.

315) Պատժախցում կալանավորված անձանց պահելու առանձնահատկությունները.

316) Ձերբակալված անձանց արգելանքից և կալանավորված անձանց կալանքից ազատելու կարգը.

317) Մուտքն ու ելքը ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրեր:

Հավելված N 3

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018 թվականի ապրիլի 26-ի
թիվ «214» հրամանի

ԳՆԱՀԱՏԱԳԻՐ

Դատախազ _____
(անուն, ազգանուն, հայրանունը)

Ստորաբաժանումը/դատախազությունը _____

Զբաղեցրած պաշտոնը _____

Դասային աստիճանը _____

Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը _____

Ազգությունը _____

Կրթությունը _____

Ստաժը (տվյալ պաշտոնում) _____

Ընդհանուր ստաժը դատախազությունում _____

Պարգևներ _____
(նշվում միայն նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում ստացած պարգևների մասին)

Խրախուսանքներ _____
(նշվում միայն նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում ստացած խրախուսանքների մասին)

Կարգապահական տույժեր _____
(նշվում միայն նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում ստացած կարգապահական տույժերի մասին)

Ընտանեկան կարգավիճակը _____

Երեխաներ _____

Ատեստավորվող դատախազի աշխատանքի գնահատականը, նրա գործնական ու անձնական հատկությունների բնութագիրը

Շարադրվում է նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակաշրջանում դատախազի գործնական, անձնական հատկանիշների և ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը՝ հիմնված տարին մեկ անգամ անմիջական

վերադաս դատախազին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ վերջինիս եզրակացությունների վրա:

Նշվում է նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակաշրջանում դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ներքո գտնված քրեական գործերի և նախապատրաստված նյութերի, տրված ցուցումների, կայացված որոշումների վերաբերյալ:

Առանձին անդրադարձ է կատարվում դատախազի հսկողությամբ կայացված որոշումների՝ վերադասության կամ դատական կարգով վերացումների դեպքերին (քանակը)՝ նշելով դրանց հետագա ընթացքը:

Դատախազի անձնական և մասնագիտական դրական հատկանիշները, աշխատանքում և վարքագծում թույլ տված խախտումները, թերություններն ու բացթողումները:

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆ՝ _____

(ղեկավարի հետևությունը՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխանելու կամ չհամապատասխանելու մասին)

_____

(ղեկավարի պաշտոնը, անուն, ազգանունը)

_____

(ստորագրություն)

« » _____ 201 թ.

Ծանոթացա՝

_____

(մեկնաբանություններ և/կամ առարկություններ)

« » _____ 201 թ.

Որակավորման հանձնաժողովի եզրակացությունը

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի որոշումը